

Վարդան Զ. Պետրոսյան  
 Բանաս. գիյր. թեկնածու

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Տարածամանակյա տիպաբանության փորձ\*

**Բանալի բառեր**- երկբարբառ և երկբարբառակերպ, համակարգային համապատասխանություն, հ.-ե. հիմք-լեզու, տարածամանակյա տիպաբանություն, ու-ի հնչույթա-հնչյունաբանական կարգավիճակ:

Համեմատական հնդեվրոպաբանությունը հնդեվրոպական հիմք-լեզվում ընդհանուր առմամբ վերականգնում է \*ai/āi, \*ei/ēi, \*oi/ōi, \*au/āu, \*eu/ēu, \*ou/ōu երկբարբառները, որոնցից երկարները «հանդիպում են գրեթե բացառապես հոլովական վերջավորություններում»<sup>1</sup>, իսկ կարճերը՝ արմատների կազմում: Ոմանք վերականգնում են նաև \*ai, \*au և «ձայնավոր+ձայնորդ» կաղապարով (հմմտ. \*ar, \*al, \*em, \*on, \*al և այլն) երկբարբառներ<sup>2</sup>: Այս համակարգն էական փոփոխությունների է ենթարկվել գրեթե բոլոր հին հնդեվրոպական լեզուներում, այդ թվում՝ հայերենում:

Ավանդաբար հին հայերենում տարբերակվել են աւ (aw), եւ (ew), իւ (iw), այ (ay), ոյ (oy)՝ «ձայնավոր+ձայնորդ» կաղապարով և եա (ea)՝ «ձայնավոր+ձայնավոր» կաղապարով երկբարբառային կազմությունները: Երկբարբառների այս կազմը տարբերակվում է ինչպես գրաբարի ձեռնարկներում, այնպես էլ մենագրական աշխատություններում: Վերջիններից որոշներում գրաբարի երկբարբառների կազմը զգալիորեն ընդլայնված է<sup>3</sup>: Այդ

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 2.08.2015:

1 Օ. Семереньи, Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 54:

2 Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 134-139, Э. Прокош, Сравнительная грамматика германских языков, М., 1954, с. 92-93: - Է. Պոռկոշը \*ai երկբարբառի «հնարավոր» դրսևորումներ է տեսնում հուն. λαός, լատ. laevus, հն. սլավ. лѣвъ «ձախ (-ձեռք)» բառերում (տե՛ս նույն տեղում, էջ 92):

3 Տե՛ս Հրաչյա Աձառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 581, Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն. հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 102-140: Գ. Բ. Ջահուկյանը երկբարբառների ավանդականորեն տարբերակվող համակարգին ավելացրել է է-ն, իսկ ուա («լուանալ»), ուե («թուել»), ուո («թոնոց») տիպի երկբարբառների հարցը համարել է վիճելի (տե՛ս Գ. Բ. Джаукян, Сравнительная грамматика

ԼԵՎՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ 3 (51) ԽՈՒՆ-ԱՆՎԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԿՆԵՐ, 2015

ՎԷՎ համահայկական հանդես

բոլոր աշխատություններում հին հայերենի երկբարբառային (նաև եռաբարբառային) կազմությունները քննության նյութ են դարձել հիմնականում համաժամանակյա մոտեցումով:

Մեր կարծիքով գրաբարում եղել է միայն մեկ իսկական երկբարբառ՝ **եա (ea)**-ն<sup>4</sup>:

Վ. Առաքելյանը հին հայերենում տարբերակել է նաև **իա** երկբարբառ (հմմտ. միաբան, միագունդ, միամիտ, միահաղոյն, միակ, միականի ևն)<sup>5</sup>: Թեև սույն հոդվածում մեզ հետաքրքրում են հին հայերենի երկբարբառային կազմությունների տարածամանակյա տիպաբանության հարցերը և ոչ թե դրանց կազմը կամ բնույթը, բայց նայնպես, **իա** տիպի երկբարբառի տարբերակման խնդրին անդրադառնալը անհրաժեշտ ենք համարում, որովհետև այդպիսի երկբարբառի ընդունումը նշանակում է հին հայերենում ճանաչել երկրորդ իսկական երկբարբառի գոյությունը, որը ևս, ինչպես և **եա**-ն, անմիջականորեն սկիզբ չի առնում հնդեվրոպական երկբարբառային համակարգից:

Հին հայերենում **իա** երկբարբառ տարբերակելու համար բավարար հիմքեր չկան, որովհետև դժվար է պնդել, որ վերոհիշյալ և նմանօրինակ բառերում միմյանց հաջորդող **ի**-ն և **ա**-ն արտաբերվել են միևնույն վանկում: Ըստ ամենայնի՝ վանկաբաժանն այդ բառերում անցել է **ի**-ի և **ա**-ի միջով (հմմտ. մի-ա-բան, մի-ա-գունդ և այլն. հնարավոր են նաև միաբան, միագունդ հատույթները, բայց դրանք վերաբերում են տողադարձին և ոչ թե վանկատմանը): Սույն տեսակետի համար կարող են հիմնավորում լինել հետևյալ հանգամանքները. 1) բոլոր բառերում **մի**- բաղադրիչը «մէկ» թվականի հնչյունափոխված տարբերակն է (մէկ>մի), այսինքն՝ ինքնուրույն միավոր (իմա՝ ձևույթ) է, որը բարդության կազմում, հատկապես ձայնավորին նախորդող դիրքում, պահպանում է առանձնակիությունը, 2) հայերենում, այդ թվում՝ հին հայերենում եթե **ի**-ով ավարտվող բառին հաջորդում էր **ա** հոդակապ կամ **ա**-ով սկսվող մասնիկ, տեղի էր ունենում **ի**-ի և **ա**-ի միաձուլում **ե**-ի մեջ (հմմտ. պատանի+ակ=պատանեակ-պատանեկիկ). այն, որ **մի**- բաղադրիչի և նրան հաջորդող **ա** հոդակապի կամ **-ակ** ածանցի (մասնիկի) միաձուլում տեղի չի ունենում, նույնպես **ի**-ի և **ա**-ի առանձնակի արտասանության վկայություն պիտի համարել, 3) բացառությամբ **միակ** և **միականի** բառերի, մյուսներում **ա**-ն հոդակապ է, հետևաբար ձևայնաբանական վերլուծության տեսանկյունից ինքնուրույն բաղադրիչ է և առանձնաբար կարող է վանկ կազմել: Մի հանգամանք, որը նույնպես նվազեցնում է **իա** հաջորդականության՝ որպես հնչարտաբերական սերտ միասնություն հանդես գալու հավանականությունը: Միակ բառում վանկաբաժանը չի կարող անցնել **իա**-ից հետո, որովհետև չի կարող լինել **միա**-կ վանկատում (բաղաձայնն առանձնաբար չի կարող վանկ կազմել): Այս բառի ամենից հավանական վանկատումը **մի-ակ** ձևն է (մեկ-(<մէկ-)+-ակ<sup>6</sup>), այսինքն՝ վանկաբաժանն անցնում է **մի**- և **-ակ** ձևույթների միջով:

армянского языка, Е., 1982, էջ 27–28):

4 Տե՛ս Վ. Զ. Պետրոսյան, Երկբարբառային և եռաբարբառային կազմությունները գրաբարում, նույնի՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 211–231:

5 Տե՛ս Վարազ Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 16:

6 **-ակ** ածանցը, ավելանալով հիմքին, բառին հաղորդում է հիմնականում նվազական-փաղաքշական

Եթե ընդունենք, որ **միակը** միավանկ բառ է, որի դեպքում հնարավոր կլինի տարբերակել **իա** «իրավիճակային երկբարբառը», ապա միականի բառաձևում չեն կարող առանձնացվել ոչ **միա-** և **-կանի**, ոչ էլ՝ **միակ-** և **-անի** վանկեր. երկու բաժանումներն էլ բռնազբոսիկ են և ձևայնաբանական, և հնչարտաբերական տեսանկյունից: Բացի այդ, հայերենի հնչարտաբերական սկզբունքի համաձայն, որպես կանոն, երկու ձայնավորի միջև արտաբերվում է թույլ **յ**, որը ոչ պատահականորեն ստացել է ձայնակապ անվանումը (հմմտ. [միաբան], [միագունդ] և այլն): Այդ **յ**-ն լիարժեք է միայն **ա** և **ո** ձայնավորներին հաջորդող դիրքում, որի պատճառով էլ այն արտահայտվում է նաև գրությամբ (յարքայ է «արքայից», գոյապէս «էապես, իսկապես» և այլն): Բացառություն է **միականի** բառը, որի գրական արտասանությունը, եթե կարելի է այդպես ձևակերպել, հետևում է ձևայնաբանական սկզբունքին, այսինքն՝ **ի**-ի և **ա**-ի միջև **յ** չի արտասանվում: Այդպիսի արտասանության պատճառը, մեր կարծիքով, **մի** և **ակ(ա)ն (ական - եզ. թ., սեռ. հլ.՝ ակն-ից)** բաղադրիչների ինքնուրույնության գիտակցումն է, այն է՝ **մի+ակ(ա)ն+ի** «մեկ աչք ունեցող», որը խոչընդոտում է \*«իա» տիպի հնչարտաբերական միասնության առաջանալուն:

Գրաբարյան «ձայնավոր+**ւ (w)/յ (y)** ձայնորդ» կաղապարով կազմություններն իսկական երկբարբառներ չէին, որովհետև այդ լեզվում **ւ (w)** և **յ (y)** ձայնորդները վանկարար (իմա՝ ձայնավորական) գործառնությամբ չունեին: Այդպիսի կազմությունները գրաբարում բավարարում էին երկբարբառին ներկայացվող երկու հիմնական չափանիշներից մեկին՝ մեկ վանկում արտաբերվելու պահանջին (հմմտ. **արւր**, բայց՝ **ա-ուրւր**, **ա-ոնեծ**, **ա-րինւ**, **հայր**, **լոյս**, **մա-տեան**, **պատա-նեակ**) և հնչույթային հերթագայություններին կարող էին մասնակցել թե՛ որպես մեկ ամբողջություն (հմմտ. **արինւ>արեան**, **սինւ>սեան**, **քոյր>քեռ**<sup>7</sup>), թե՛ բաղադրիչներից միայն մեկով (հմմտ. **լոյս>լուսոյ**, **հոյս>հուսոյ**, **հայր>հարւ**, **լեառն>լե(օ)րինք**, **գիւղ>գե(օ)ղջ**, **աղբեր>աղբե(օ)ր**, **մատեան>մատե(օ)նի**), բայց չէին բավարարում մյուս՝ **վանկարար գործառնությամբ իրականացնելու** պահանջին: Այդ կազմությունները երկբարբառակերպ էին (дифтонгоид): Երկբարբառակերպ է եղել նաև **ու (ow)**-ն, ուստի մաքուր երկբարբառներ չեն կարող համարվել նաև **ուա**, **ուե**, **ուո** տիպի կազմությունները, որովհետև վանկատելիս երկու ձայնավորների միջև գտնվող կիսաձայնը (իմա՝ բաղաձայնական ձայնորդը) պիտի անցնի երկրորդ վանկին, այսինքն՝ **լուանալ**, **թուել**, **թուոց** բառերում վանկաբաժանը պիտի անցնի **ո**-ի և **ւ**-ի միջով (հմմտ. **լո-ւանալ**, **թո-ւել**, **թո-ուոց**), որքան էլ որ այսօր այդպիսի բաժանումը կարող է հնչարտաբերական դժվարությունների հետ կապված լինել: Ինչ վերաբերում է մյուս՝ **ո (r)**, **ր (r)**, **լ (l)**, **մ (m)**, **ն (n)** ձայնորդներով հնարավոր երկբարբառային կազմություններին, ապա նույնիսկ Ա. Մելեն, որը **հ.-ե.** հիմք-լեզվում ընդունել է «ձայնավոր+ձայնորդ» կաղապարով երկբարբառների գոյությունը (հմմտ. **ar**, **al**, **em**,

իմաստ (**լճակ**, **ծովակ**, **աղջակ** և այլն), բայց մի շարք դեպքերում այն վաղուց դադարել է այդ իմաստն արտահայտել և կերտում է բառի երանգային տարբերակ (հմմտ. **թիակ**, **հենակ**, **վերելակ**, **մոլորակ**, **ներքնակ**, **լճակ** և այլն): Այդ բառերի թվում է նաև **միակը**:

<sup>7</sup> Սա, ըստ էության, խառն տիպի հերթագայության օրինակ է, որովհետև և՛ բաղադրիչների կազմն է ամբողջությամբ փոխվում, և՛ մի կողմում տեղի է ունենում երկբարբառի բաղադրիչներից մեկի անկում, այսինքն՝ վերածում պարզ ձայնավորի:

on, an...)<sup>8</sup>, հին հայերենում նման կապակցությունները համարում է ձայնավորի և ձայնորդի հաջորդականություններ և ոչ թե երկբարբառներ (հմմտ. հյ. **երգ**, սնակ. *arkāh* «երգ», հյ. **սիրտ**, հուն. **καρδία** «սիրտ», հոմ. հուն. **κῆρ** և այլն)<sup>9</sup>:

Հին հայերենի և հ.-ե. երկբարբառային համակարգերի տարածամանակյա տիպաբանության տեսանկյունից «երկբարբառ, թե երկբարբառակերպ» հարցադրումը կորցնում է իր կարևորությունը, որովհետև և՛ երկբարբառը, և՛ երկբարբառակերպը կարող էին ունենալ երկբարբառին բնորոշ ծագում: Այդ առումով հին հայերենի և հ.-ե. մյուս լեզուների երկբարբառային համակարգերի միջև ընդհանուր առմամբ առկա են հետևյալ համապատասխանությունները.

Ա) Հյ. **այ** (**ay/ai**) < հ.-ե. **\*ai**:- Այս երկբարբառն ունեցել են հին պարսկերենը (**ai**)<sup>10</sup>, խեթերենը (**ai**)<sup>11</sup>, լիտվերենը (**ai**)<sup>12</sup>, հին հունարենը (**ai**)<sup>13</sup>, հին վ. գերմաներենը (**ai**) և գոթերենը (**ai**)<sup>14</sup>: Հին հնդկերենի **ai**-ի ծագումնաբանության հարցում հստակություն չկա. սկզբունքորեն հ.-ե. **\*ai**, **\*ei**, **\*oi** երկբարբառներից յուրաքանչյուրը կամ բոլորն էլ հին հնդկերենում կարող էին տալ **ai**, սակայն նշված երկբարբառների համապատասխանը այդ լեզվում **ē**-ն է՝ սերված հնդիրանական հին **ai**-ից<sup>15</sup>: Հ.-ե. **\*ai**-ը հին վ. գերմաներենում հնչյունափոխվել է նաև **ei** երկբարբառի և **ē** երկար ձայնավորի, իսկ լիտվերենում՝ **ė/ie/** «բարդ ձայնավորի»<sup>16</sup>:

Բ) Հյ. **աւ** (**aw/au**) < **\*au/\*āu**:- Ունեցել են հին պարսկերենը (**aw**, **āw**)<sup>17</sup>, սանսկրիտը (**au**)<sup>18</sup>, հին հունարենը (**au**-**αὐξω**=**αὐξάνω** «մեծացնում եմ») <sup>19</sup>, լատիներենը (**au**-**aurum** “ոսկի”) <sup>20</sup>, գոթերենը (**au**-**aukan** «բազմանալ») <sup>21</sup>, լիտվերենը (**au**-**saũsas** «չոր») <sup>22</sup>, թոխարական Բ-ն (**au**-**auks**) <sup>23</sup>:

Գ) Հյ. **եւ** (**ew**) < հ.-ե. **\*eu**:- Այս երկբարբառը վերոհիշյալ լեզուներից պահպանել էր հին հունարենը (հմմտ. **εὖρος** «լայնություն», **εὐτυχής** «երջանիկ») <sup>24</sup>: Ունեցել է նաև լատիներենը, բայց վաղ՝ մինչդասական շրջանում այն

8 Տե՛ս **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 134-139: 9 Տե՛ս **А. Meillet**, Esquisse d'une grammairse compase'e de l'armenien classique, Vienne, 1936, էջ 44:

10 Տե՛ս **В. С. Расторгуева**, Древнеиранские языки // “Языки Азии и Африки”, т. II, М., 1978, էջ 20-22:

11 Տե՛ս **Edgar H. Sturtevant**, A comparative grammar of the Hittite language, Philadelphia, 1933, էջ 108-109,- **А. Н. Савченко**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 92-93,- **А. А. Королев**, Хетто-лувийские языки, “Языки Азии и Африки”, т. I, М., 1976, էջ 57:

12 Տե՛ս **М. Н. Петерсон**, Очерк литовского языка, М., 1955, էջ 16:

13 Տե՛ս **С. И. Соболевский**, Древнегреческий язык, М., 1948, էջ 8:

14 Տե՛ս **Э. Прокош**, նույն տեղում, էջ 100-104,- **М. М. Гухман**, Готский язык, М., 1958, էջ 39-40, **А. И. Смирницкий**, Древнеанглийский язык, М., 1955, էջ 41:

15 Տե՛ս **Мейе А.**, Введение ....., էջ 137:

16 Տե՛ս **М. Н. Петерсон**, նույն տեղում, էջ 16:

17 Տե՛ս **В. С. Расторгуева**, նույն տեղում:

18 Տե՛ս **Т. Я. Елизаренкова**, Грамматика ведийского языка, М., 1982, էջ 65:

19 Տե՛ս **С. И. Соболевский**, նույն տեղում: Հ.-ե. **\*au**-ն հունարենում տվել է նաև **ou** (հմմտ. **οὖς** «ակունք»), իսկ հին վ. գերմ.՝ **ou** և **ō** (**sōren** «չորացված»):

20 Տե՛ս **Э. Бурсье**, Основы романского языкознания, М., 1952, էջ 42, **М. Нидерман**, Историческая фонетика латинского языка, М., 1949, էջ 64:

21 Տե՛ս **М. М. Гухман**, նույն տեղում:

22 Տե՛ս **К. Г. Красухин**, Введение в индоевропейское языкознание, М. 2004, էջ 65: Մ. Պետերսոնը լիտվերենում **au** երկբարբառ չի տարբերակել ( տե՛ս **М. Н. Петерсон**, նույն տեղում):

23 Տե՛ս **К. Г. Красухин**, նույն տեղում:- Թոխարական Ա-ում այն տվել է **o** (**ok**):

24 Տե՛ս **С. И. Соболевский**, նույն տեղում:

վերածել է *ū*-ի (հմնտ. *ūrō* < \**eusō* «այրվում են»)²⁵: Մյուս լեզուներում *h*-*t*. \**eu*-ն ենթարկվել է զանազան փոփոխությունների (հմնտ. ալեյր (>ալիլր) < \**al*-արմատից «աղալ». հուն. ἄλευρον «ալյուր»²⁶, առեւծ (>առիւծ)²⁷ < \**reug*'- «մոնչալ». հուն. ἐρέουμαι «ցուլի բառաչելը, առյուծի մոնչալը», լատ. *rūgio* «առյուծի մոնչալը», գոթ. *in* - *rauhatjan* «կատաղել», հւլ. *rъzati*, ռուս. р(Ѡ)жатъ «խրխնջալ» են)²⁸:

Դ) Հյ. *nj* (*oy/ oï*) < *h*-*t*. \**eu*/\**ou*:- Հ.-*t*. \**ou*-ն ևս եղել է միայն հին հունարենում (հմնտ. βουλή «խորհուրդ»)՝ դասական շրջանում վերածվելով պարզ [u] ձայնավորի²⁹, որը, ինչպես արդեն նշվել է, պահպանել էր երկրաբառային գրությունը: Հին հայերենի *nj* (*oy/ oï*) երկրաբառը արդյունք է մի հնչյունափոխության, որի օրինաչափական անցումների բացահայտումը, պայմանավորված ուղղակի օրինակների սակավությամբ, կապված է որոշ դժվարությունների հետ: Հ.-*t*. \**eu*/\**ou* > *hj*. *nj* (*oy/ oï*) համապատասխանության համար հիմք են տալիս, մասնավորապես, հին հունարենի հետ ունեցած մի քանի զուգահեռներ (հմնտ. *hj*. լոյս, հուն. λευκός «սպիտակ» (< \**leuk*- «լուսավորել»), հուն. λοῦσσο-*hj*. բոյծ «սնունդ, ուտեստ» (< \**bhug*'- (< \**bhrūg*'-)): Մյուս ցեղակիցներում այդ երկրաբառը ենթարկվել է զանազան փոփոխությունների, այդ թվում՝ վերածվել է երկար ձայնավորների (հմնտ. գոթ. liuhaf «լույս», սնսկ. rōčati «լուսավորում է»,- \**louk*- տարբերակային հիմքից է \**louksno* «լուսավորող» բառը. հմնտ. լատ. lūna «լուսին», lūx «լույս», հին պրուս. lauxnos «աստղեր», ավեստա raoxšna «լուսավորող», *hj*. լոյս, լուսին և այլն):

Հ.-*t*. \**eu* > *hj*. *nj* (*oy/ oï*) անցումը բացատրող ուշագրավ դիտարկում է գրաբարի քոյր բառի ստուգաբանական քննությունը, որին դիմել են հայերենագիտության երախտավորներ Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն և Հ. Պեդերսընը: Նրանք բոլորն էլ *hj*. քոյր-ի նախածն են համարում *h*-*t*. \**swesōr* /\**syesōr*/-ը: Ըստ Ա. Մեյեի՝ նախ՝ -*esō*- ի *s*-ը դարձել է *h*, ապա այդ *h*-ն տղվել է, իսկ *ō*-ն *e*-ին հաջորդող դիրքում վերածվել է *u*-ի՝ այդպիսով տալով \**eu* երկրաբառը: Վերջինից էլ զարգացել է հին հայերեն *nj*-ը³⁰: \**Swesōr* /\**syesōr*/-ը ամբողջությամբ տվել է քոյր ձևը, քանի որ *hj*. բառակցքի *p(k)*-ն ծագել է *h*-*t*. \**sw*- հնչյունախմբից (հմնտ. *hj*. քուն < *h*-*t*. \**swopnos*³¹, *hj*. փիսն «քրտինք» < *h*-*t*. \**swidro*-, հուն. ιδρώς³²), *p* (*r*)-ն էլ՝ *h*-*t*. \**r*-ից³³: Հ. Պեդերսընը *h*-*t*. \**eu* > *hj*. *nj* անցման միջանկյալ օղակներ է համարում *ou*-ն և *öu*-ն՝ ամբողջական շղթան ներկայացնելով \**eu* > \**ou* > \**öu* > *nj* (*oy/ oï*) տեսքով³⁴: Վերջինիս կարծիքով տեղի է ունեցել \**eu* և \**ou* երկրաբառների միաձուլում,

25 Տե՛ս Մ. Нидерман, նույն տեղում:

26 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. I, Եր., 1971, էջ 94:

27 Առեւծի ա-ն նախահավելական մասնիկ է՝ աուգմետ, ուստի համեմատության ժամանակ դուրս է թողնվում:

28 Տե՛ս Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 259:

29 Տե՛ս С. И. Соболевский, նույն տեղում:

30 Տե՛ս А. Meillet, նույն տեղում, էջ 39:

31 Հ. Հյուբշմանն առաջարկում է \**svepnos* տարբերակը (տե՛ս Հայնրիխ Հյուբշման, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 504):

32 Տե՛ս Հայնրիխ Հյուբշման, նույն տեղում, էջ 503-504, Հայնրիխ Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 230:

33 Նույն տեղում, էջ 238:

34 Տե՛ս Հովգեր Պեդերսըն, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 107:

որը նա համարում է «նմաներանգության»<sup>35</sup> արդյունք. այն «մի միայն յայտնապէս բաւական փակ e և o ձայնաւորներուն վրայ ազդած է»<sup>36</sup>: Ընդ որում հին հայերենի երկբարբառներն ըստ առաջացման բաժանելով առաջնա-յինների և «երկրորդականների» (իմա՝ երկրորդաբար առաջացածների-Վ. Պ.)՝ նա «երկրորդական երկբարբառներուն մէջէն հնագոյններն» է համարում «s ձայնի մը կորսուելովը ծագում առած երկբարբառները»<sup>37</sup>, այսինքն՝ **ոյ**-ի տիպի երկբարբառները:

Ե) Հյ. **իւ** (**iw/ iu**)-ը նույնպես առաջացել է հ.-ե. \***eu**-ից՝ եւ/ew/ միջանկյալ օղակով (հ.-ե. \***eu**>hյ. եւ>**իւ**): Այդ են վկայում աղբեր>աղբիւր, առեւծ>առիւծ, ալեւր>ալիւր, բեր>բիւր, գեւ>գիւղ (բայց՝ գեղջ-սեռ. տր.), հարեւր>հարիւր տիպի անցումները հին հայերենում, ըստ ամենայնի՝ դեռևս նախագրաբարյան փուլում: Հին հայերենի **իւ** (**iw/iu**)-ը հիշեցնող զարգացում է նաև գոթերենի **iu** երկբարբառը, միայն թե վերջինը մաքուր երկբարբառ է, ի տարբերություն գրաբարյան **իւ** երկբարբառակերպի (հմմտ. \***leuk**-> գոթ. **liuhaf** «լույս», \***geusō** «փորձել» > գոթ. **kiusan**, \***deuk**- «քաշել, տանել» > գոթ. **tiuhan**, գոթ. **biugan** «ծռել, կորացնել», գոթ. **þiufs** «բարիք»):

Զ) Հյ. **եա** (**ea**):-Այս երկբարբառը չի ունեցել հ.-ե. հիմք-լեզուն: Դատելով գրությունից՝ հ.-ե. հին լեզուներից այդպիսի երկբարբառ ունեցել է միայն հին անգլերենը (հմմտ. **bearn** [bæarn] “երեխա”, **ēare** [æare] “ականջ”), սակայն հազիվ թե կարելի է խոսել հին հայերենի և հին անգլերենի եա ~ **ea** երկբարբառների ծագումնաբանության և հնչյունական արժեքների նույնականության մասին: **եա** երկբարբառը չունի նույնիսկ հին հունարենը, որը դիտարկվող լեզուներից ամենից հարուստն է երկբարբառներով: Այսքանն էլ բավարար է ասելու, որ այն հայկական նորակազմություն է, որը ձևավորվել է նախագրային հայերենի փուլում: **եա** երկբարբառի համար փոխազդեցական կամ փոխառական ծագում ենթադրելու բավարար հիմքեր նույնպես չկան, քանի որ այդ երկբարբառը չեն ունեցել մեր տարածաշրջանի մյուս հ.-ե. լեզուները՝ հնդիրանականը, խեթա-լուվականը, հունարենը, լատիներենը: Քիչ հավանական է, որ **եա**-ն լինի տարածաշրջանի ոչ հնդեվրոպական լեզուների (օր.՝ ասորերենի կամ վրացերենի) հետ փոխազդեցության արդյունք, այսինքն՝ ենթաշերտային երևույթ: Մենք հակված ենք **եա**-ի առաջացումը բացատրելու հայերենի իրողություններով, որի համար որոշակի հիմքեր են տալիս, մասնավորապես, եւ>**իւ** (հմմտ. աղբեր>աղբիւր, ալեւր>ալիւր, առեւծ>առիւծ, բեր>բիւր, հարեւր>հարիւր), **իւ**>**եա** (հմմտ. արիւն>արեան, սիւն>սեան, անկիւն>անկեան), **եա**>**ե** (հմմտ. Ու.-Սեռ./Տր.-դայեակ>դայեկի, ատեան>ատենի, սենեակ>սենեկի, կեանք>կենաց, այծեամն>այծեման, լեռան>լերինք,- սիրեա՝ «սիրիր» (բուն հրամ., եզ. թ., II դ.)> սիրեցուք «սիրեմ, կսիրեմ, սիրելու եմ, պիտի սիրեմ» (ստոր. երկրորդ ապառնի, հզն. թ., I դ.), հայեա՝ (ց) «նայիր» (բուն հրամ., եզ. թ., II դ.)-հայեցարուք «նայեցեք» (բուն հրամ. հզն. թ., II դ.)- **եայ**>**է**

35 Գործածվում է գերմաներենի Umlaut բառի նշանակությամբ, որը, որպես ձայնդարձի մի տեսակ, հատուկ է գերմանական լեզուներին: Բնորոշվում է իբրև «գերմանական լեզուներում արմատական ձայնավորների՝ պատմականորեն երանգային փոփոխություն՝ ածանցի կամ վերջավորության ազդեցությամբ» (տե՛ս Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 535):

36 Հովգեր Պեդերսոն, նույն տեղում:

37 Նույն տեղում:

(հմմտ. պաշտան**եայ**>պաշտոն**էի**, քրիստոն**եայ**>քրիստոն**էի**-եզ. թ. Ուղղ.-եզ. թ. Սեռ./Տր.) հերթագայությունները:

Եթե նշվածներին ավելացնենք է>ի (կէս>կիսել, վէս>վիմափոր, ծէս>ծիսական, մէկ/(մէն)>մի), է>ե (աղուէս>աղվեսու, եղէգն>եղեգան, պատճէն>պատճենի), է>ե/ի (Մովսէս>Մովսեսի/Մովսիսի, Ներսէս>Ներսեսի/Ներսիսի) տիպի հնչյունափոխությունները, ապա ակնհայտ կդառնա, որ **եայ** երկբարբառի ծագումը պիտի փնտրել նշված՝ գուտ հայերենյան իրողությունների տիրություն:

Ա. Մեյեն **կեամ**-ի «ապրել/ապրում են» **եայ**-ի համար ենթադրում է *\*iyā-* նախածն՝ հիմք ընդունելով *\*iyō-*ն հին հունարենի **βίωναι**-ում «(ես) ապրում են»<sup>38</sup>: Պիտի կարծել, որ այս դեպքում գործել է **ա(a)**-ից առաջ **ի(i)** ձայնավորի **ե** դառնալու հնչյունափոխական երևույթը, որը արդի հայերենում վերածվել է յ-ի (հմմտ. որդի**+ակ**>որդ**եակ**/>որդ**յակ**, կղզի**+ակ**>կղզ**եակ**/>կղզ**յակ**, պատանի**+ակ**>պատան**եակ**/>պատան**յակ**): **Ի(ի)**-ն և **յ(յ)**-ն, հնչարտաբերական որակներով լինելով շատ մոտ հնչյուններ<sup>39</sup> (իսկ այդպիսիների միջև հակադրությունը շատ թույլ է, և հնչաշղթայում չեն կարող անմիջականորեն հաջորդել մեկը մյուսին), կամ ձուլվել են, կամ էլ **յ**-ն սղվել է:

Ե) Հյ. **ու (ow/ou)**:- **ու**-ի հնչույթա-հնչյունական բնույթի վերաբերյալ հայերենագիտության մեջ կան տարբեր պատկերացումներ: Ըստ Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, Է. Աղայանի, Գ. Զահուկյանի, Հ. Մուրադյանի, Վ. Առաքելյանի՝ հին հայերենում **ու**-ն եղել է պարզ ձայնավոր<sup>40</sup>: **ու**-ին երկբարբառային բնույթ են վերագրել Ն. Մառը, Հ. Պեղերսընը, Ա. Ա. Աբրահամյանը<sup>41</sup>: Գրաբարյան ու-ն երկբարբառակերպ է համարել Է. Թումանյանը: Հմմտ. «Պիտի կարծել, որ **ու**-ի բարդ գրային նշանը արտացոլել է ոչ լիովին մաքուր [ս] ձայնավոր, այլ մի հնչյուն, որը, ակներև է, ունեցել է երկբարբառակերպ բնույթ, առանց հնչույթաբանական արժեքայնության», կամ «եթե կարելի է այդպես արտահայտվել, ու [ս] ձայնավորը գրաբարում անցումային բնույթի հնչույթ է»<sup>42</sup>: **ու**-ն պարզ ձայնավորի գրային նշան համարողների հիմնական կովաններից մեկը (եթե ոչ՝ հենց հիմնականը) այն է, որ Մաշտոցը, հայոց գրերը ստեղծելիս, առաջնորդվել է հունական այբուբենի սկզբունքներով, իսկ հունարենում 5-րդ դարում նախկին **ou** երկբարբառը վերածվել էր մենաբարբառի, ինչպես՝ պարզ ձայնավորի, բայց գրությունը մնացել էր հինը: Պիտի ասել, որ

38 Տե՛ս **A. Meillet**, նույն տեղում, էջ 45:

39 Ըստ Է. Աղայանի՝ դասական գրաբարում [ի]-ն և [յ]-ն միմյանց նկատմամբ գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ եղել են միևնույն հնչույթի՝ «[ի] ձայնորդի... ենթահնչույթները» (տե՛ս **Է. Բ. Աղայան**, նույն տեղում, էջ 191):

40 Տե՛ս **Հայրիխ Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 38, 67, 166 և այլն, **A. Meillet**, նույն տեղում, էջ 40,- **Հրաչյա Աճառյան**, նույն տեղում, էջ 578-581, **Մ. Աբեղյան**, Գրաբարի քերականություն, Յեր., 1936, էջ 9,- **Գ. Ա. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 241, **Է. Բ. Աղայան**, նույն տեղում, էջ 92-96,- **Գ. Բ. Джаукян**, նույն տեղում, էջ 26,- **Հ. Գ. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., էջ 29-30, **Վարազ Առաքելյան**, նույն տեղում, էջ 8:

41 Տե՛ս **Н. Марр**, Грамматика древнеармянского языка, С-Пб., 1903, էջ 13-15, **Հովհեր Պեղերսըն**, Նպաստ մը հայ. լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 37, **Ա. Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 4:

42 Զ. **Г. Туманян**, Древнеармянский язык, М., 1971, с. 27:

այդպիսի բացատրություն տրվել է նաև ընդհանուր սլավոներենի և հին սլավոներենի **oy** գրության համար: Հմմտ. «**oy** գրությունը երկու տառով՝ **o** և **y**, նշանակում է մեկ **y** հնչյուն, իսկ այդ հնչյունի փոխանցումը երկու տառերով հունական գրության նմանություն է ներկայացնում»<sup>43</sup>: Չնայած այս տեսակետի կրողները գիտական հեղինակություններ են, այնուամենայնիվ, այն չի կարող ընդունվել իբրև անառարկելի ճշմարտություն հետևյալ պատճառներով. 1) հայերենը գրի առնելու շրջանից մեզ բաժանում է ավելի, քան 1600 (405 թ.), իսկ հին սլավոներենը գրի առնելու շրջանից՝ շուրջ 1150 (855/863 թ.) տարի. ժամանակային այսպիսի հեռավորությունից հնարավոր չէ վստահորեն խոսել երկտառ գրության պարզ հնչյունական արժեք ունենալու մասին, մանավանդ որ մաշտոցյան և կիրիլյան այբուբենների ստեղծման փուլում հենց հին հունարենի **ou**-ի պարզ ձայնավորական հնչում ունենալու մասին միտքը ենթադրական բնույթ ունի. 2) մաշտոցյան և կիրիլյան այբուբենների ստեղծման ժամանակի միջև կա մոտ 350 տարվա հեռավորություն, իսկ այդ ժամանակը լիովին բավարար է, որպեսզի որևէ լեզվի գրության և արտասանության միջև տարբերություններ առաջանան: Հետևաբար, եթե նույնիսկ ընդունենք, որ կիրիլիցայում **oy**-ով նշանակվել է պարզ **u** ձայնավորը, ապա ճիշտ չէ այդ տեսակետը ինքնաբերաբար նաև հայերենի վրա տարածելը: Այս դեպքում ավելի շուտ խոսք կարող է լինել գրաբարյան կամ հին սլավոներենի երկբարբառային գրության և դրանց փոփոխված կամ, ինչպես ընդունված է ասել, ավանդական արտասանության մասին, քան թե հին լեզվավիճակներում այդ երկբարբառային միավորների՝ ձայնավորի պարզվելու մասին, ինչպես որ, օրինակ, **au** երկբարբառն ենք արտասանում [o] (հմմտ. հար [hor] և ոչ թե [hawor], ինչպես որ ենթադրվում է այդ երկբարբառի գրաբարյան հնչյունական արժեքի առնչությամբ)<sup>44</sup>:

Ըստ ամենայնի՝ **hj. ու (u)**-ն սերում է **h.-ե. \*o**-ից, ընդ որում՝ **ու**-ի կարող էին վերածվել ինչպես երկար **\*ō**-ն (հմմտ. **\*ghōlū**-<sup>45</sup> **hj. գլուխ**), այնպես էլ կարճը՝ **\*o** (հմմտ. **\*pont-** / (**\*pent-**) «ոտք դնել, գնալ» ~ **hj. հուն**)<sup>46</sup>: Ցեղակից լեզուներում **hj. ու (u)**-ի համապատասխաններն են **u/ū, o/ō** և **a** ձայնավորները (հմմտ. **հուն. δῶρον** «ընծա, նվեր» ~ **hj. տուր-(ք)**, **հուն. πῦρ** «հուր» ~ **hj. հուր**, **հուն. πέρσι** «հերու» ~ **hj. հերու** «անցյալ տարի», **հուն.**

43 **Ф. Ф. Фортунатов**, Избранные труды, т. 2, М., 1957, с. 12:

44 **Հ. Աճառյանը** աւ երկբարբառակերպին խուլ հնչյուն է վերագրում բառավերջի դիրքում (տես **Հրաչյա Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 588): Մեր կարծիքով **au**-ը նույն կամ դրան շատ մոտ հնչյուն ունեցել է նաև փակ վանկում, ինչպես՝ հար [hawor]:

45 **Հ.-ե. նախաձևն** ըստ **Հուգեր Պեդերսոն**, Հայերէն և դրացի լեզուները, Վ., 1907, էջ 79: **Հ. Աճառյանը**, ներկայացնելով **գլուխ** բառի ստուգաբանությունների պատմությունը, այն դատում է չստուգաբանվածների շարքին (տես **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 565): **Գ. Զահուկյանը** առաջարկում է **\*ghōlukho-** (տես **Գ. Բ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 127, **\*ghōlu-kho** (տես **Գևորգ Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Եր., 2010, էջ 163) նախաձևային տարբերակները, ըստ էության՝ ընդունելով **Հ. Պեդերսոնի** առաջարկած ստուգաբանությունը: Վերջին՝ **\*ghōlu-kho-** տարբերակում **-kh-** (>**hj. ju**)-ն առանձնացվում է արմատից՝ որպես հավելյալ մասնիկ: Զուգահեռներն են սլավ. **glawa-** և լիտվ. **galwá-** և:

46 Եթե **Հ. Հյուբշմանը** որպես **hj. հուն**-ի **h.-ե.** նախաձև նշում է **\*pont-**ը (տես **Հայրիսի Հյուբշման**, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 469), **Հ. Աճառյանը** նշում է ձայնարձային **\*pent-** տարբերակը (տես **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հատ. I, Ե., 1971, էջ 122), ապա **Գ. Զահուկյանը՝** երկուսն էլ (տես **Գևորգ Զահուկյան**, ՀՄԲ, Եր., 2010, էջ 467):



θύρα «դուռ»~հյ. դուռն, սնսկ. snuša ~ հյ. նու «հարսն», սնսկ. çurbha «սուրբ, մաքուր» ~ հյ. սուրբ, սնսկ. mūš «մուկ»~ հյ. մուկն, լատ. crūres «սրունք» ~ հյ. սրունք և այլն): Ա. Մելեն նկատում է, որ հ.-ե. \*o-ն հայերենում **ու** է դառնում՝ ռնգայինից առաջ փակվելով (հմմտ. հյ. հուն (<\*pont-) ~ լատ. pōns (սեռ. pontis) «կամուրջ», հուն. πόντος «ծով», πάτος «շավիղ», սնսկ. pánthās «ձանապարհ», հյ. տուն (<\*dōm-) ~ սնսկ. dāmah, լատ. domus «տուն», հուն. δόμος «տուն, բնակարան», հն սլավ. домъ)<sup>47</sup>: Ինչպես երևում է բերված օրինակներից, հյ. **ու**-ի համապատասխանները ցեղակից լեզուներում բուրն էլ պարզ ձայնավորներ են, հետևաբար կարելի էր մտածել, որ տիպաբանական տվյալները նույնպես վկայում են հին հայերենի **ու**-ի պարզ ձայնավորական (և ոչ թե երկբարբառային/երկբարբառակերպային) բնույթի մասին: Սակայն ուշադրության արժանի են նաև հետևյալ հանգամանքները: 1) Հյ. **ու**-ի համար ընդունվում է ոչ միայն հ.-ե. \*o/\*ō , այլև \*ou երկբարբառային նախաձևը (հմմտ. հյ. լուսին<\*louko- «լուս» ~ լատ. luna (<\*louksnā) «լուսին», հուն. λευκός<sup>48</sup> «լուսավոր, սպիտակ», սնսկ. rōka «լուսավոր», ručī- «լուս», հն սլավ. luči «լուս», luča «ձառագայթ» և այլն): 2) Ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, \*louko-ն նախաձև է ինչպես հյ. լոյս բառի համար, այնպես էլ հնչյունափոխությամբ նրանից առաջացած լուսին-ի. **ու**-ն պարզ ձայնավոր համարողների կարծիքով լոյս ~ լուսին բառերում առկա է երկբարբառ ~ պարզ ձայնավոր հերթագայություն, իսկ մեր կարծիքով՝ երկբարբառ ~ երկբարբառ հերթագայություն (**ոյ** ~ **ու**)<sup>49</sup>: 3) Հայերենի որոշ բարբառներում (ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ) հանդիպում են գլուխ բառի **ու**-ի երկբարբառային տարբերակներ (հմմտ. գլխօ՛խ-Ասլ., կլխօխ-Մկ., Վան, կլխօ՛խ- Հմշն, կլլխօխ- Դրբ.)<sup>50</sup>, որը նշանակում է, որ ու-ի երկբարբառային բնույթը չպետք է բացառել, անկախ այն բանից, այդ բարբառների համապատասխան երկբարբառային բաղադրիչները կհամարվեն նախագրաբարյան կամ գրաբարին զուգահեռ գոյություն ունեցած ինքնուրույն զարգացումներ, թե հետգրաբարյան զարգացումներ: 4) Տիպաբանական առումով ոչ պակաս կարևոր է նաև, թե ինչ ծագում ունի **ու** (**ու**)-ն ցեղակից լեզուներում: Ըստ այդմ ուշագրավ է, որ երկբարբառ>մենաբարբառ (այսինքն՝ պարզ ձայնավոր) անցումը սովորական երևույթ է հ.-ե. հին լեզուներում: Ընդ որում՝ առավել տարածված է երկբարբառի անցումը երկար ձայնավորի, որոշ դեպքերում էլ այն պահպանում է երկբարբառային բնույթը՝ նույնությամբ կամ հնչյունափոխված: Այսպես, հ.-ե. \*ou-ն սնսկ. տվել է **ō**, դասական լատիներենում և հին սլավոներենում **ū** (հմմտ. \*louk- սնսկ. rōcāyatī «ստիպում է լուսավորել», լատ. lūcus «պուրակ», հն սլավ. лoучa/лoучь «ձառագայթ, լուս»), \*ōu-ն սանսկրիտում դարձել է **āu**, հին հունարենում **ōū**, իսկ լատիներենում **o** (հմմտ. \*gūdos «եզան» – սնսկ. gāuš, հուն. βοῦς, լատ. bovem)<sup>51</sup>: Նշված

47 Տե՛ս A. Meillet, նույն տեղում, էջ 41:

48 Հունարեն ձևը վկայում է նաև \*leuk- ձայնդարձային տարբերակի մասին: Ի դեպ, Գ. Ջահուկյանը հենց այդ նախաձևն էլ ընդունում է «լուս», «լուսին» և դրանցից բաղադրված նշանակությունների համար (տե՛ս Գևորգ Ջահուկյան, ՀՄԲ, էջ 300–302):

49 Համաժամանակյա տեսանկյունից՝ գրաբարյան երկբարբառակերպ~երկբարբառակերպ հերթագայություն:

50 Օրինակներն ըստ Հր. Աճառյան, ՀԱԲ, հատ. I, էջ 566:

51 Տե՛ս Յ. Прокопи, նույն տեղում, էջ 93:

օրինակներում ուշագրավ է հատկապես \***ou** երկբարբառի կրած փոփոխությունները սանսկրիտում, որը, ինչպես հայտնի է, **o** չի ունեցել, բայց երկբարբառը վերածել է երկար **ō** -ի և ոչ թե **āu**-ի, ինչպես երկրորդ շարքի օրինակում է: Գերմանական հին լեզուները վկայում են, որ **u**-ն և **o**-ն այս լեզուներում հաճախ հանդես են գալիս որպես լծորդակից հնչույթներ, նույնիսկ՝ լծորդակից հնչյուններ: Այսպես, ընդհանուր գերմաներենը, ըստ ամենայնի, \***o** չի ունեցել, որի պատճառով այս լեզվում հ.-ե. \***o**-ն համընկել է \***a**-ին: Այդ առումով գերմանական լեզուներից ընդհանուր գերմաներենին ամենից մոտ է գոթերենը, ուր նույն դրությունն է: Գոթերենի **u**-ն և նրա տարբերակը համարվող **au**-ն [ɔ] համապատասխանում են գերմանական մյուս լեզուների **u**-ին և **o**-ին (հմմտ. գոթ. *sunus* «որդի» ~ հին իսլնդ. *sunr*, հին անգլ. հին սաքս., հին վրն գերմ. *sunu*, ~ գոթ. *hauru* «եղջյուր» ~ ռուն. *horna*, հին իսլնդ., հին անգլ. հին սաքս., հին վրն գերմ. *horn* և այլն)<sup>52</sup>: Գերմանական լեզուների դեպքում ևս կարևոր է, որ գերմանական **au**-ն և **ō**-ն հաճախ (եթե ոչ՝ առհասարակ) սերում էին հ.-ե. \***ou**-ից (հմմտ. \**roudhos* «կարմիր» ~ գոթ. *raufis*, հին վրն գրմ. *rōt*): Ըստ էության, ներկայացվածից շատ տարբեր չեն նաև Ա. Մեյեի դիտարկումներն ընդհանուր սլավոներենի առնչությամբ. ընդհանուր սլավոներենում գերմաներենի միևնույն հնչույթը գրադարձվել է և երկբարբառային, և մենաբարբառային գրությամբ (հմմտ. ընդհ.-գերմ. \***bōkō**- ընդհ. սլավ. *бoуkы* «նշան, տառ» և *бoк* )<sup>53</sup>: Նշված և նմանօրինակ տվյալներից (դրանց թիվը փոքր չէ հ.-ե. լեզուներում), մեր կարծիքով, կարելի է եզրակացնել, որ ինչպես հայերենում, այնպես էլ ցեղակից հ.-ե. լեզուներում **u** (**u/ū**) և **o** (**o/ō**) հնչույթների՝ մեկը մյուսից կամ երկուսն էլ հ.-ե. \***ou**-ից սերելու, հաճախ՝ որպես լծորդակիցներ հանդես գալու հանգամանքները վկայում են, որ շատ դեպքերում **u**-ն ունեցել է երկբարբառային ծագում և տարբեր լեզուներում տարբեր ժամանակներում է վերածվել պարզ ձայնավորի: Հետևաբար, հին հայերենի (կարծում ենք՝ նաև հին սլավոներենի) **u** (**u**)-ի երկտառ գրությունը ոչ թե պարզապես հունարենի գրության նմանակում է, այլ նշված լեզուների այբուբենների ստեղծման դարաշրջանում համապատասխան հնչույթը դեռևս ունեցել է երկբարբառային, ավելի հավանական է՝ երկբարբառակերպային բնույթ, իսկ պարզ ձայնավորի այն վերածվել է ավելի ուշ: Այս առումով չպետք է անտեսել նաև այն իրողությունը, որ **u**-ը ոչ միայն **u**-ի բաղադրիչ էր, այլև **tu**-ի, **hu**-ի, **au**-ի: Հետևաբար հին հայերենում այն ինքնուրույն հնչույթ էր (հմմտ. աւագ ~ արագ, թիւ ~ թիգ (սեռ. *թգոյ*)/ ~ թին (սեռ. *թնոյ*) «խաղողի կորիզ»/ ~ *թի-թ* (սեռ. *թիոյ*) «թիակ», հայր (եզ. անվն.) ~ հաւր (եզ. սեռ.)) և չէր կարող պարզապես կցորդ լինել հնչույթի արտացոլման համար:

Ունանք երկբարբառ/երկբարբառակերպ/ են համարել նաև հին հայերենի **է** հնչույթը<sup>54</sup>: Այս խնդրին ևս անդրադարձել ենք «Երկբարբառային և եռաբարբառային կազմությունները գրաբարում» հոդվածում (ավելի հանգամանակից՝ «Հին հայերենի **է** և հին սլավոներենի **ѣ** հնչույթների տարա-

52 Տե՛ս **М. М. Гухман**, նույն տեղում, էջ 50-51:

53 Տե՛ս **А. Мейе**, *Общеславянский язык*, М., 1951, էջ 45:

54 Տե՛ս **Է. Բ. Աղայան**, նույն տեղում, էջ 132-139, **Գ. Բ. Джаукян**, նույն տեղում, էջ 26, **Հ. Գ. Սուրադյան**, նույն տեղում, էջ 135-142, **Յ. Գ. Туманян**, նույն տեղում, էջ 32-33:

ժամանակյա տիպաբանությունը» հողվածում), ուստի այստեղ այլևս չենք անդրադառնա<sup>55</sup>: Միայն ասենք, որ, մեր համոզմամբ, հին հայերենի **է**-ն եղել է երկար ձայնավոր և ոչ թե երկբարբառ կամ երկբարբառակերպ:

Այսպիսով, ոչ միայն ծագումնաբանական, այլև տիպաբանական քննությունը ցույց է տալիս, որ հին հայերենի **աւ** (**aw**), **եւ** (**ew/ew**), **իւ** (**iw/ew**), **այ** (**ay/aj**), **ոյ** (**oy/oj**) երկբարբառները/ երկբարբառակերպերը/ սկիզբ են առնում հ.-ե. երկբարբառային համակարգից (**իւ**-ը՝ **եւ** < <հ.-ե. \***eu**) անցումային օղակով) և իրենց անմիջական համապատասխանները ունեն ցեղակից լեզուներից շատերում: **եա** (**ea**)-ն հայերենյան նորակազմություն է, ինչը նույնպես սովորական երևույթ է լեզուների պատմության ընթացքում, որովհետև փոփոխությունները տեղի են ունենում ոչ միայն գոյություն ունեցող իրողությունների քայքայման և պարզեցման, այն է՝ տարամիտման, այլև միավորմամբ նորակազմությունների առաջացման ճանապարհով: Փոքր-ինչ յուրահատուկ է հին հայերենի **ու**-ի կարգավիճակի հարցը: Մեր քննությունից հետևում է, որ **ու**-ն առնվազն V դարի I կեսին ունեցել է երկբարբառային դրվածք. նրա պարզեցումը մենաբարբառի (իմա՝ ձայնավորի) տեղի է ունեցել ավելի ուշ: Հետևաբար մաշտոցյան այբուբենում **ու**-ի երկտառ գրությունը ոչ թե հունական գրային ավանդույթի ազդեցություն է, այլ գրերի գյուտի շրջանում այդ հնչույթի երկբարբառային /երկբարբառակերպային/ հնչման դրսևորում: Այս իրողությունը նույնպես բավականին համոզիչ կերպով փաստարկվում է տիպաբանական տվյալներով: Հետևաբար հին հայերենի **ու**-ն պիտի տառադարձել երկտառ՝ **ow/ow**, այլ ոչ թե միատառ՝ **u**, ինչպես որ վարվում են **ու**-ն պարզ ձայնավոր համարողները:

**Վարդան Զ. Պետրոսյան** – Զբաղվում է ընդհանուր լեզվաբանության, կառուցվածքային լեզվաբանության, ընդհանուր և հայկական հնչույթաբանության, հ.-ե. լեզուների համեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, մասնավորապես՝ հին հայերենի հնչույթաբանության, ժամանակակից հայերենի տեսության հարցերով: Հեղինակ է երկու գրքի և քսանից ավելի լեզվաբանական հոդվածների:

55 Տե՛ս Վ. Զ. Պետրոսյան, նույն տեղում:– Երկրորդ հողվածը հրապարակման փուլում է:

## Summary

### ARMENIAN AND INDO-EUROPEAN DIPHTONGAL SYSTEMS

#### Diachronic– Typological Attempt

Vardan Z. Petrosyan

**Key Words** – diphthong and a like-diphthong, systematic correspondence, Proto-Indo-European Language, diachronic typology, phonemic– phonetic status of *ni*.

The system of Old Armenian diphthongs has been studied mainly from the synchronic point of view, while the diachronic studies have only been restricted to pointing out the origin or, in other words, the Indo-European prototypes of the diphthongs, without comprehensive investigation. The investigation of the given matter on the one hand reveals a reliable image of the correspondence between Old Armenian and Indo-European diphthongs and on the other hand provides an opportunity to explain the deviations of Old Armenian system of diphthongs from that of the Indo-European diphthongs. According to this, there are the following correspondences between the diphthongal systems of Old Armenian and Indo-European languages: *au*/\**āu*>*ui*(*aw/au*), \**ai*>*uj* (*ay/aj*), \**eu*>*ti*(*ew*), \**eu*/\**ou*>*ni*(*oy/ oj*), \**eu*> (*ti/ew/*>)>*ti* (*iw/ iu*): *tu* (*ea*) is the only pure Old Armenian diphthong, an Armenian new formation, which doesn't have its Indo-European prototype. Among the Old Indo-European languages only Old English had the diphthong *tu* (*ea*)– (comp. *bearn* [bæɑrn] “child”, *ēare* [ˈæare] “ear”), but taking into consideration the fact that neither the Proto-Language, nor any other old Indo-European language had the mentioned diphthong, there is no reason to think about genetic similarities between Old Armenian and Old English *tu*~*ea* diphthongs.

The phonemic status of Old Armenian *ni* is to some extent arguable; the question is whether the phoneme *ni* was a like-diphthong or just a simple vowel. The typological studies give us reason to think that the phoneme *ni* had also been a diphthong-like, so it should be transcribed as *ow/ou*, rather than *u*.

## Резюме

### АРМЯНСКАЯ И ИНДОЕВРОПЕЙСКАЯ ДИФТОНГИЧЕСКИЕ СИСТЕМЫ

#### Опыт диахронической типологии

Вардан З. Петросян

**Ключевые слова** – дифтонг и дифтонгоид, системное соответствие, индоевропейский язык–основа, диахроническая типология, фонемно–фонетический статус буквы *ni*.

Дифтонгическая система древнеармянского языка изучалась преимущественно с синхронической точки зрения, а диахронические наблюдения ограничивались

указанием на генеологию или, что то же самое в данном случае, на индоевропейские праформы дифтонгов без всестороннего исследования. Анализ проблемы с позиции диахронической типологии, с одной стороны, выявляет более достоверную картину соответствия древнеармянской системы дифтонгов с индоевропейской, а с другой стороны, делает возможным интерпретировать имеющиеся отклонения и различия древнеармянской системы от индоевропейской. Итак, между индоевропейской и армянской дифтонгическими системами существуют следующие соответствия: \***au**/\***āu**>աւ (aw/aų), \***ai**>այ (ay/aј), \***eu**>ել (ew), \***eu**/\***ou**>ոյ (oy/oј), \***eu**> (ել/ew/>)ի (iw/ių). Ёш (ea) – единственный настоящий дифтонг древнеармянского языка, армянское новообразование, который не имеет своей индоевропейской праформы. Из древних индоевропейских языков дифтонг ea (ɛa) имел только древнеанглийский (ср. *bearn* [bæɑrn] “ребёнок”, *ĕare* [ˈæare] “ухо”), но так как ни индоевропейский язык-основа и никакой другой древний индоевропейский язык не имели такого дифтонга, нет оснований говорить о генеологической общности древнеармянского ёш и древнеанглийского ea.

Несколько проблематичен вопрос фонетического статуса фонемы *ni* древнеармянского языка, то есть, *ni* был дифтонгом/дифтонгоидом/ или простым гласным звуком. Типологические наблюдения дают основания говорить, что, по всей вероятности, в древнеармянском *ni* тоже был дифтонгом /дифтонгоидом/. Следовательно, его надо транскрибировать двубуквенным написанием – *ow/ou*, а не однобуквенным – *и*.